USAID FROM THE AMERICAN PEOPLE

PH international ADVANCING SOCIETIES, CONNECTING PEOPLE

Digital Armenia

ՁԵՌՆԱՐԿ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2023

ՁԵՌՆԱՐԿ
«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

Հեղինակներ՝
Սուրեն Քրմոյան
Մերի Շերոյան

Ձեռնարկը մշակվել է «Թվային Հայաստան» ՀԿ կողմից «Էլեկտրոնային կառավարման հզորացում՝ ի նպաստ էլեկտրոնային ժողովրդավարության և ներառական որոշումների կայացման» նախաձեռնության շրջանակում, որը «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի ենթադրամաշնորհ է:

«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագիրը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ միջոցով, և այն իրականացնում է «Փի-Էյչ Ինթերնեյշնլ» կազմակերպության գլխավորած կոնսորցիումը:

Ձեռնարկում ներկայացված բովանդակությունը բացառապես «Թվային Հայաստան» կազմակերպությանն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Նոյեմբեր, 2023
Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

05 Ներածություն

06 Ի՞նչ է էլեկտրոնային ժողովրդավարությունը: Էլեկտրոնային ժողովրդավարության և մասնակցության գործիքները Հայաստանի Հանրապետությունում:

18 Էլեկտրոնային ժողովրդավարությունը տեղական մակարդակում:

20 Էլեկտրոնային կառավարում:

25 Ձեր տվյալները: Ի՞նչ տվյալներ են պահվում պետական ռեգիստրերում ձեր մասին:

29 Էլեկտրոնային նույնականացում և էլեկտրոնային թվային ստորագրություն:

31 Էլեկտրոնային ծառայություններ:

ՄԵՐ ՄԱՍԻՆ

«Թվային Հայաստան» կազմակերպության առաքելությունն է թվայնացման ու տեխնոլոգիական զարգացման միջոցով նպաստել Հայաստանի հզորացմանը:

Թվային Հայաստանի թիմը մշակում է հանրային կառավարման, թվայնացման և տեխնոլոգիական զարգացման ոլորտում ծրագրեր և հետազոտական աշխատանքներ, ինչպես նաև իրականացնում է այդ ոլորտներում իրականացվող բարեփոխումների և ծրագրերի մշտադիտարկում և արդյունավետության գնահատում:

Թվային գրագիտության բարձրացման, թվային լուծումների ընտրության ոգեշնչման, նորարարության և թվային աշխատաոճի խթանման նպատակով կազմակերպությունը շարունակաբար մշակում և իրականացնում է էլեկտրոնային կառավարման և տեխնոլոգիական զարգացման ոլորտներում կրթական և իրազեկման ծրագրեր:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մի դարաշրջանում, որտեղ թվային գործիքները մեր առօրյա կյանքի անբաժանելի մասն են կազմում, տեխնոլոգիայի և ժողովրդավարության միջև սիներգիան դարձել է մեր ժամանակակից աշխարհի որոշիչ գործոնը: Թվային այս դարաշրջանում երկրների կառավարման և քաղաքական գործընթացներին քաղաքացիների մասնակցությունը ոչ միայն պարզապես էվոլյուցիա է ապրել, այլ ենթարկվել է հեղափոխական փոփոխությունների: Քաղաքացիները պետական կամ տեղական մակարդակում ոչ միայն մասնակցում են կառավարմանը իրենց կողմից ընտրված իշխանությունների միջոցով, այլ ցանկանում են անմիջականորեն մասնակցել պետական կամ տեղական հարցերի քննարկմանն ու լուծմանը: Այս համատեքստում էլեկտրոնային ժողովրդավարության հայեցակարգը և դրա առաջարկած մասնակցային գործիքների շարքը արդեն իսկ ժամանակակից կառավարման անփոխարինելի բաղադրիչներ են:
Ինտերնետի, շարժական սարքերի և թվային գործիքների տարածումը սկիզբ դրեց էլեկտրոնային ժողովրդավարության նոր դարաշրջանին, որը վերափոխեց քաղաքացիների մասնակցությունը իրենց ազգերի ժողովրդավարական գործընթացներին: Այս արագ զարգացող տեխնոլոգիական միջավայրի շրջանակներում Հայաստանը նույնպես իր քայլերն է անում էլեկտրոնային ժողովրդավարության ներուժը օգտագործելով կառավարման թափանցիկությունը, հաշվետվողականությունը և քաղաքացիական ակտիվ ներգրավվածությունը խթանելու համար:

Սույն ձեռնարկը պատկերացում է տալիս Հայաստանում էլեկտրոնային կառավարման և ժողովրդավարության ոլորտներում թվային գործիքների վերաբերյալ, որոնք քաղաքացիներին հնարավորություն են տալիս ակտիվորեն մասնակցել իրենց երկրի որոշումների կայացման գործընթացներին: Ձեռնարկը ուսումնասիրում է առցանց մասնակցային գործիքները, քաղաքացիների ներգրավվածության թվային հարթակները և Հայաստանի ժողովրդավար ապագան կերտելու համար դրանց ներուժը: Այն ընդգծում է թվային քաղաքացիության և քաղաքացիական պատասխանատվության նշանակությունը՝ ընդգծելով տեխնոլոգիական գործիքների օգտագործումը և առանցքային դերը, որը մեծ դեր է խաղում երիտասարդ մասնագետների, մանկավարժների և համայնքային աշխատակիցների կողմից թվային ակտիվիզմի միջոցով դրական փոփոխությունների քարոզչության գործում:

Ի՞ՆՉ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ:

Համացանցի լայն օգտագործման արդյունքում մարդիկ սոցիալական մեդիայում հաղորդակցվելուն զուգահեռ սկսեցին գրեթե բոլոր հարցերի շուրջ տեղեկատվություն ստանալ և հանրային դիսկուսին մասնակցել առցանց տիրույթում: Համացանցը դարձավ տարաբնույթ թեմաների քննարկման հանրային ֆորում: Լայն կիրառություն ստացան հատկապես քաղաքական թեմաների քննարկումները: Արդյունքում, էլեկտրոնային ժողովրդավարության ձևավորման խթանը հանդիսացավ հանրության ակտիվ քննարկումները, բանավեճերը, կառավարման գործընթացներին հասարակության մասնակցությունը էլեկտրոնային կառավարման գործիքների օգտագործման միջոցով:

Սա հնարավորություն տվեց մի շարք պետություններին քաղաքական և կառավարման գործընթացների նկատմամբ հետաքրքրվածությունը մեծացնելու, կառավարման թափանցիկության և հաշվետվողականության համար ձեռնարկել առանձին միջոցառումներ՝ ներդնելով էլեկտրոնային ժողովրդավարության տարատեսակ գործիքներ:

Էլեկտրոնային ժողովրդավարության գործիքները կարելի է նկարագրել որպես ինտերակտիվ գործիքներ, որոնք թույլ են տալիս հասարակության յուրաքանչյուր անդամի արտահայտել կարծիքներ և ձգտել ազդել որոշումների կայացմանը իրենց համայնքում, քաղաքում, երկրում կամ նույնիսկ առավել լայն մասշտաբով:

Այս առումով, Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին լայն կիրառման մեջ մտան մի շարք էլեկտրոնային ժողովրդավարության գործիքներ:

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը էլեկտրոնային ժողովրդավարության և մասնակցային կառավարման արդյունավետ էլեկտրոնային գործիք է, որի միջոցով իրականացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մշակված իրավական ակտերի հանրային քննարկումը:

Կայքը հանդիսանում է այն առցանց հարթակը, որը թույլ է տալիս իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության ապահովման նպատակով օրենքով սահմանված կարգով նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ հանրության իրազեկել, ինչպես նաև բացահայտել հանրային կարծիքը, ստանալ և ամփոփել դրանց վերաբերյալ դիտողությունները և առաջարկությունները:

Ի՞նչ է իրենից ենթադրում հանրային քննարկումը:

Հանրային քննարկումը նորմատիվ իրավական ակտի նախագծերի իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության, այդ գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով՝ այդ նախագծերի վերաբերյալ հանրության իրազեկման, ինչպես նաև հանրային կարծիքը բացահայտելու, դրանց վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ստանալու և դրանք ամփոփելու գործընթաց է:

Հանրային քննարկումը պարտադիր իրականացվում է քննարկում իրականացնող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (www.e-draft.am) հրապարակման եղանակով:

Ինչպե՞ս է վարվում կայքը:

www.e-draft.am կայքը վարվում է ՀՀ արդարադատության նախարարության կողմից: Նախարարությունը համակարգում է միասնական կայքի աշխատանքների իրականացումը և մշտադիրակումը, ինչպես նաև ապահովում է, որ հանրային քննարկում իրականացնող գերատեսչությունները ունենան հապատասխան հնարավորությունը կայքի ներքին տիրույթ մուտք գործելու, իրակավական ակտերի նախագծերը տեղադրելու, հրապարակելու և ամփոփելու համար:

Ո՞ր գերատեսչություններն են հրապարակում իրավական ակտերի նախագծերը:

Իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության, գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով պետական կառավարման համակարգի մարմինները (նախարարություններ, կառավարության ենթակա մարմիններ, Վարչապետին ենթակա մարմիններ) որոնք օրենքով սահմանված կարգով իրավասու են մշակել օրենսդրական ակտի նախագիծ կայքի միջոցով կարող են իրականացնել դրանց հրապարակումը և հանրային քննարկումը:

Որքա՞ն է տևում հանրային քննարկումը:

Հանրային քննարկումների տևողությունն առնվազն 15 օր է:

Ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը, որը կազմակերպում է հանրային քննարկումը, միասնական կայքում հրապարակելուն զուգահեռ պետք է նորմատիվ իրավական ակտի նախագիծը և դրա ընդունման հիմնավորումը ներկայացնի շահագրգիռ մարմիններին: Վերջիններս նախագծի վերաբերյալ իրենց դիրքորոշումը ներկայացնում են առավելագույնը 15 օրվա ընթացքում:

Ո՞ր նախագծերն են պարտադիր ենթակա հանրային քննարկման:

Օրենսդրական ակտերի նախագծերը ենթակա են հանրային քննարկման, բացառությամբ միջազգային պայմանագրի վավերացման (դրան միանալու) մասին օրենքի նախագծի:

Այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը հանրային քննարկման կարող են դրվել նախագիծը մշակող կամ այն ընդունող մարմնի նախաձեռնությամբ:

Պետական կառավարման համակարգի մարմինների կողմից մշակվող Հայաստանի Հանրապետության կառավարության նորմատիվ որոշումների նախագծերը պարտադիր ենթակա են հանրային քննարկման, բացառությամբ ռազմական և արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերի:

Հայաստանի Հանրապետության կառավարության ներքին իրավական ակտերի նախագծերը և Հայաստանի Հանրապետության կառավարության անդամների կողմից ընդունման ենթակա ներքին իրավական ակտերի նախագծերը ևս Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են հանրային քննարկման՝ բացառությամբ գաղտնիք պարունակողների:

Պետական կառավարման համակարգի մարմինների կողմից մշակվող Հայաստանի Հանրապետության կառավարության անհատական որոշումների նախագծերը Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարականի հիման վրա ենթակա են հանրային քննարկման:

Ներքին և անհատական ակտերի հանրային քննարկումներն իրականացվում են ՀՀ կառավարության որոշմամբ սահմված «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման» կարգով սահմանված ընթացակարգով:

Ինչպե՞ս ներկայացնել առաջարկություն որևէ իրավական ակտի նախագծի վերաբերյալ:

Երբ իրավական ակտի նախագիծը դրվում է հանրային քննարկման www.e-draft.am կայքում առնվազն 15 օրյա ժամկետում, ապա յուրքանչյուր ոք՝ ֆիզիկական թե իրավաբանական անձ, կարող է կայքում թողնել առաջարկություն:

Առաջարկություն ներկայացնելու համար անհրաժեշտ է՝

1) Գրանցվել կայքում (Գրանցվել որպես ֆիզիկական անձ կամ իրավաբանական):

2) Մուտք գործել այն նախագծի էջը որևի վերաբերյալ ցանկանում եք ներկայացնել առաջարկություն:

3) Նախագծի ստորին հատվախում «Թողնել առաջարկ» պատուհանում գրել առաջարկը և սեղմել «Ուղարկել» կոճակը:

Ինչպե՞ս են ամփոփվում առաջարկները կայքում:

Մի նախագծի վերաբերյալ կարող եք ներկայացնել ցանկացած քանակությամբ առաջարկ, **սակայն պետք է հիշել, որ՝**

Նախագիծը հրապարակած մարմինը դիտում է ներկայացված առաջարկությունները:

Եթե առաջարկությունը ներկայացված է օտար լեզվով կամ պարունակում է մարդու և քաղաքացու պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող արտահայտություններ, ապա համապատասխան մարմինը տվյալ առաջարկը կարող է ենթարկել մոդերացիայի և չթողնել վերջինիս հրապարակումը: Եթե ներկայացված առաջարկությունը չի խախտում վերոնշյալ պահանջները, ապա այն երկու օրվա ընթացքում ինքնաշխատ եղանակով հրապարակվում է նախագծի «Ամփոփաթերթ» դաշտում:

Նախագծի հանրային քննարկման ավարտից հետո 15-օրյա ժամկետում համապատասխան մարմինը պետք է ամփոփի ներկայացված առաջարկությունները և նախագծի «Ամփոփաթերթ» դաշտում լրացնի իր եզրակացությունը և կատարված համապատասխան փոփոխությունը:

Ի՞նչ է իրենից ենթադրում «Կողմ եմ» կամ «Դեմ եմ» կոճակը

Իրավական առումով այն ոչ մի դերակատարում չունի և չի ազդում նախագծի հետագա ընթացքի վրա:

Տվյալ հավանության կոճակները կարող են նախագիծը մշակող մարմնի հայեցողությամբ լինել կամ չլինել նախագծի հրապարակված էջում:

Այն անձինք ովքեր չեն ցանկանում առաջարկ ներկայացնել www.e-draft.am կայքի առաջարկությունների բաժնում պարզապես կարող են իրենց դիրքորոշումը հայտնել «Կողմ եմ» կամ «Դեմ եմ» կոճակի միջոցով:

Ի՞նչ է լինում երբ հանրային քննարկումը ավարտվում է:

Հանրային քննարկման ավարտից հետո նախագիծը մշակած մարմինը ամփոփում է ներկայացված առաջարկությունները, որոնք ստացել է կայքի միջոցով, ինչպես նաև այն առաջարկները որոնք շրջանառվել է այլ շահառու մարմինների կողմից: Այնուհետև կատարում է համապատասխան լրամշակումներ նախագծում:

www.e-draft.am կայքի միջոցով կարող եք՝

- Հետևել նախագծերի ընթացքին
- Առցանց ծանոթանալ իրավական ակտերի նախագծերին
- Ներկայացնել առցանց առաջարկություններ
- Ստեղծել անձնական գրասենյակ
- Բաժանորդագրվել և ստանալ ծանուցումներ նոր նախագծերի վերաբերյալ
- Առցանց եղանակով հետևել վիճակագրությանը

Ի՞նչ է հանրագիրը:

ՀՀ սահմանադրության 53-րդ հոդվածի համաձայն.



Յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Հանրագիրը դա առաջարկություն է հանրային նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ: Այսինքն, առաջարկությունը պետք է վերաբերվի ոչ է հանրագիրը ներկայացնող անձին կամ նրա կարիքներին, այլ պետք է ուղղված լինի որևէ հանրային ոլորտի բարելավմանը կամ թերությունների շտկմանը:

Յուրքանչյուր անձ կարող է

- ներկայացնել գրություն, առաջարկությունը որը վերաբերվում է տնտեսական, քաղաքական, սոցիալական և հասարակական կյանքի այլ ոլորտներին,
- առաջարկություններ գործող իրավակարգավորումների կատարելագործման վերաբերյալ,
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության թերությունների մասին հաղորդում կամ վերջիններիս գործունեության բարելավման ուղղված առաջարկություն:

Որո՞նք են հանրագրի տեսակները:

անհատական հանրագիր՝ հանրագիր, որը ներկայացրել է մեկ անձ.

կոլեկտիվ հանրագիր՝ հանրագիր, որը ներկայացրել են երկու և ավելի անձինք միևնույն հարցով



Ինչպե՞ս կարելի է ներկայացնել հանրագիր:

Հանրագիր կարելի է ներկայացնել թե՛ թղթային տարբերակով, թե՛ էլեկտրոնային հարթակի միջոցով՝ էլեկտրոնային տեսքով:

Ի՞նչ է իրենից ենթադրում www.e-petition.am հարթակը:

Հանրագրերի միասնական www.e-petition.am հարթակը էլեկտրոնային ժողովրդավարության և մասնակցային կառավարման արդի գործիք է, որը միտված է ապահովել հանրագրեր ներկայացնելու սահմանադրական իրավունքի իրացմանը:

Եթե անհատը հանրագիրը ներկայացնում է թղթային եղանակով, ապա այն պետք է բովանդակի հետևյալ տեղեկությունները.

«Հանրագիր» վերտառությունը.

հանրագրի վերնագիրը.

անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման վայրի հասցեն, կապի միջոցի վերաբերյալ տվյալներ.

այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը կամ պաշտոնատար անձի անունը, որին ուղղված է հանրագիրը.

հանրագիր ներկայացնող անձի առաջարկը, ինչպես նաև հիմնավորումը՝ ցանկության դեպքում:

Հանրագիրն ստորագրում է հանրագիրը ներկայացրած անձը կամ նրա ներկայացուցիչը:

Թղթային եղանակով ներկայացվող կոլեկտիվ հանրագիրն ստորագրում են հանրագրին միացած բոլոր անձինք:

Հանրագրին կարող են կցվել ներկայացված առաջարկը հիմնավորող փաստաթղթեր և այլ նյութեր:

Հանրագիրը ներկացում է առձեռն կամ փոստային եղանակով:

Էլեկտրոնային եղանակով հարնագիր ներկայացնելու համար անհրաժեշտ է այցելել www.e-petition.am (կամ www.հանրագիր.հայ) կայք

Անհրաժեշտ քայեր

- Նույնականցվել էլեկտրոնային (eID) , բջջային(mID) կամ առկա այլ նույնականացման մեխանիզմների միջոցով:
- Սեղմել «Ստեղծել նոր հանրագիր» կոճակ
- Ընտրել հանրագրի տեսակը՝ անհատական կամ կոլեկտիվ:

- Լրացնել հանրագիր ենրկայացնողի տվյալները
- Լրացնել Հանրագրի բովանդակությունը
- Ցանկից ընտրել ներկայացվող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը
- Լրացնել բաշտոնատար անձի անունը, ազգանունը, պաշտոնը (ոչ պարտադիր տվյալ)
- Ցանկից ընտրել հանրագրի ոլորտը
- Լրացնել հանրագրի վերնագիրը
- Գրել հանրագրով ներկայացվող առաջարկը
- Գրել հիմնավորում (ցանկության դեպքում)
- Կցել փաստաթղթեր կամ նյութեր (ոչ պարտադիր)
- Էլեկտրոնային ստորագրել և հանձնել

www.e-petition հարթակի միջոցով կարող եք՝

- Ստեղծել անձնական գրասենյակ
- Առցանց ներկայացնել էլեկտրոնային հանրագիր
- Միանալ/ աջակցել այլոց կողմից ներկայացված հանրագրերին
- Հետևել հանրագրի ընթացքին
- Տեսնել հրապարակված հանրագրերը և դրանց վերաբերյալ ներկայացված պատասխանները
- Առցանց եղանակով հետևել վիճակագրությանը

Էլեկտրոնային ժողովրդավարությունը տեղական մակարդակում

Ժողովրդավարությունը տեղական մակարդակում կարելի է նկարագրել որպես ինքնակառավարման մարմինների որոշումներում քաղաքացիական մասնակցության ձև: Տեղական ժողովրդավարությունը մարմնավորում է ինքնակառավարման և քաղաքացիների մասնակցության սկզբունքները իրենց անմիջական համայնքում որոշումների կայացման գործընթացներում:

Այն հնարավորություն է տալիս ուղղակիորեն ազդել այն հարցերի վրա, որոնք ազդում են առօրյա կյանքի վրա, ինչպիսիք են տեղական ենթակառուցվածքները, կրթությունը, առողջապահությունը և այլ ոլորտներ:

Տարբեր մեխանիզմների միջոցով քաղաքացիների կողմից արտահայտված մտահոգությունները, ներկայացված առաջարկները ձևավորում են մասնակցային քաղաքականության, որոնք արտացոլում են բնակիչների արժեքներն ու առաջնահերթությունները:

«Ակտիվ քաղաքացի» հարթակը
www.activecitizen.yerevan.am

«Ակտիվ քաղաքացի» հարթակը Երևան քաղաքի զարգացման և բարեփոխումներին միտված նախաձեռնություններին ծանոթանալու և դրանց վերաբերյալ քաղաքացիների կողմից առաջարկությունների ներկայացման համար նախատեսված առցանց գործիք է: Այն մշակվել է Երևանի քաղաքապետարանի կողմից և հանդես է գալիս որպես գաղափարների քննարկման համար նոր առցանց հարթակ:

Հարթակ միջոցով 18 տարին լրացած յուրաքանչյուր գրանցված օգտատեր՝

- Կարող է մասնակցել որև է գաղափարի, նախագծի վերաբերյալ առցանց քվեարկությանը,
- հայտնել կարծիք և առաջարկություն ներկայացված գաղափարի կամ նախագծի վերաբերյալ:

Էլեկտրոնային ժողովրդավարությունը տեղական մակարդակում

Այսօր Հայաստանում տեղական մակարդակում էլեկտրոնային ժողովրդավարության գործիքներից կարելի է առանձնացնել համայնքապետարանների պաշտոնական կայքերը: Գործող 71 համայնքային կայերքում զետեղված է տեղեկատվություն համապատասխան համայնքի վերաբերյալ, ինչը հնարավորություն է տալիս առցանց եղանակով հաղորդակցվել, դիմել տեղական ինքնակառավարման մարմիններին, ստանալ ծառայություններ, ծանոթանալ համայնքային նորություններին և իրադարձություններին, տեսնել ՏԻՄ-երի կողմից կայացված որոշումները, ներկայացնել առաջարկներ և մասնակցել հանրային քննարկումներին:

ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի պաշտոնական https://www.ijevancity.am/ հարթակը:

Հարթակում զետեղված է տեղեկատվական բնույթի տեղեկատվության ստացման հնարավորությունից մինչև հայանքային իշխանության հետ հաղորդակցման, մասնակցության, խնդիրների ներկայացման և ծառայությունների ստացման գործառույթներ:

Հարթակում առկա է համայնքի զարացմանը մասնակցելու հնարավորություն՝ ըստ ոլորտների առաջարկությունների ներկայացման և ներգրավվան միջոցով:

Միաժամանակ, առցանց եղանակով կարելի է տեսնել հանրային քննարկման վերաբերյալ հայտարությունները և ներկայացնել տվյալ թեմայի վերաբերյալ հանրային մեկնաբանություն կամ առաջարկություն:

Հաշվի առնելով նաև համայնքային խնդիրների կառավարման կարևորությունը, հարթակը թույլ է տալիս առցանց եղանակով ներկայացնել համայնքում առկա որևէ խնդրի վերաբերյալ գրություն, տեսնել խնդրի լուծման կարգավիճակը և այսպիսով մասնակից դառնալ որևէ խնդրի առավել ակտիվ և թափանցիկ կերպով արձագանքմանը և լուծմանը:

Թվային դարաշրջանում աշխարհի բազմաթիվ պետություններ առաջնահերթության կարգով թվայնացնում են կառավարման համակարգը, թվային եղանակով ապահովում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ծառայությունների էլեկտրոնային առցանց մատուցումը: Հայաստանում ևս թվային ոլորտի առաջամարտիկներից է կառավարման համակարգը: Տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ամբողջությամբ կամ մասամբ թվայնացրել են ինչպես իրենց ներքին բիզնես գործընթացները, այնպես էլ իրենց կողմից մատուցվող ծառայությունները՝ ներդնելով ծառայությունների մատուցման առցանց հարթակներ:

Էլեկտրոնային ծառայությունների աննախադեպ ծավալի թվայնացման պայմաններում կարևոր է կրթական հաստատությունների ներկայացուցիչների իրազեկվածությունը Հայաստանում ներդրված էլեկտրոնային կառավարման գործիքների և դրանց հնարավորությունների վերաբերյալ:

Թվային հասարակության ձևավորման պայմաններում դասախոսները և ուսուցիչները ոչ միայն պետք է ունենան Հայաստանում ներդրված էլեկտրոնային գործիքներից օգտվելու գիտելիքներ և հմտություններ, այլև պետք է կարողանան այդ գիտելիքներն ու հմտությունները փոխանցել աշակերտներին և ուսանողներին: Նույն մոտեցումը պետք դրսևորվի նաև տեղական ինքնակառավարման մարմինների դեպքում: Տեղական ծառայողները պետք է ունենան թվայի ոլորտում բավարար գիտելիքներ և հմտություններ՝ մասնակցային կառավարման գործիքները տեղական մակարդակում կիրառելու և քաղաքացիների իրավունքները երաշխավորելու համար:

ՔԱՂԱՔԱՑԻ - ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ
www.e-request.am

Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը հնարավորություն է տալիս էլեկտրոնային եղանակով դիմում, բողոք, հարցում կամ այլ գրություն ուղարկել պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին, հետևել ներկայացված գրության ընթացքին և պատասխանը ստանալ անմիջապես կայքի միջոցով կամ այլ նախընտրելի եղանակով:

Հարթակի անձնական գրասենյակում հնարավոր է նաև տեսնել նախկինում ներկայացված դիմումները, հարցումները և բողոքները, դրանց պատասխանները: Հարթակի միջոցով հնարավոր է նաև ամրագրել այց պետական պաշտոնյայի հետ հանդիպելու կամ հանրային ծառայություն ստանալու համար:

Հարթակի միջոցով կարող եք՝

- Ստեղծել անձնական գրասենյակ
- Առցանց ներկայացնել դիմում, բողոք, հարցում
- Հետևել ներկայացված դիմումների ընթացքին
- Հետևել առցանց վիճակագրությունը
- Հանդիպման հայտ ներկայացնել և հերթագրվել պետական պաշտոնյայի մոտ այցի
- Հերթագրվել հյուտոսական ծառայություն ստանալու նպատակով

հարթակի միջոցով կարող եք դիմել շուրջ 203 հաստատության



- ՀՀ բարձրագույն մարմիններ
- Նախարարություններ
- Կառավարության ենթակա մարմիններ
- Վարչապետին ենթակա մարմիններ
- Դատական մարմիններ, դատախազություն
- ԲՈՒՀ
- Մարզպետարաններ
- Նախարարություններին ենթակա մարմիններ
- Այլ պետական հաստատություններ
- Քաղաքապետարական, համայնքապետարաններ
- Այլ մարմիններ

Ո՞վ է ազդարարը:

Ազդարարը ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը բարեխղճորեն հաղորդում է տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքերի մասին որոնց նա բախվել է:

Դա կարող է լինել պաշտոնատար անձի, մարմնի, կազմակերպության կամ կազմակերպության աշխատակցի հետ, որոնց հետ նա գտնվում կամ գտնվել է որոշակի հարաբերության մեջ, օրինակ՝ աշխատանքային, քաղաքացիաիրավական, վարչաիրավական, կամ որին դիմել է ծառայությունների մատուցման նպատակով:

Հաղորդումը կարող է վերաբերվել նաև շահերի բախման, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ:

Ո՞րն է ազդարարման նպատակը:

1)Բացահայտել կոռուպցիոն բնույթի դեպքերը, շահերի բախման, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտումները, հանրային շահերին ուղղված այլ վնասները.

2)Նվազեցնել և կանխարգելել կոռուպցիան.

3)Նպաստել կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը:

Ազդարարման էլեկտրոնային հարթակը՝ www.azdararir.am

Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ազդարարը «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն, կարող է ՀՀ գլխավոր դատախազություն հաղորդել տեղեկություններ կոռուպցիոն դեպքի մասին:

Հարթակը հնարավորություն է տալիս անանուն եղանակով, ինչպես նաև տվյալները ներկայացնելու եղանակով ազդարարել կոռուպցիոն դեպքերի մասին:

Միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ի դեմս ՀՀ արդարադատության նախարարության, երաշխավորում է ազդարարի պաշտպանությունը՝ ապահովելով նրա անանունությունը:

Հարթակի միջոցով կարող եք՝

- Իրականացնել անանուն եղանակով ազդարարում
- Իրականացնել տվյալները ներկայացնելու եղանակով ազդարարում
- Տեղեկանալ ազդարարման կարգավիճակին
- Հետևել առցանց վիճակագրությունը

ՁԵՐ ՏՎՅԱԼՆԵՐԸ. Ի՞ՆՉ ՏՎԱՅԼՆԵՐ ԵՆ ՊԱՀՎՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԵՐՈՒՄ ՁԵՐ ՄԱՍԻՆ:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրենց գործունեության բնույթից ելնելով, քաղաքացիների մասին հավաքագրում և պահում են տեղեկությունների մեծ ծավալ: Այդ տեղեկատվությունը հավաքագրվում է անձի ծննդյան օրվանից:

Կրթական հաստատություն ընդունվելու, աշխատանքի, ծառայության ստացման և ընդհանուր առմամբ պետության հետ շփման և ցանկացած տեսակի հարաբերության, օրինակ՝ դատական, վարչաիրավական կամ այլ գործընթացներ, շրջանակում անձի մասին հավաքագրվում, պահվում են տարաբնույթ տեղեկություններ:

Տեղեկությունները և տվյալները կարող են լինել բազմազան՝ անձնական տվյալներ, բժշկական տվյալներ, հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն, ստացված եկամուտներ, ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տվյալներ և այլն:

Ներկայիս թվային գործիքների զարգացման ժամանակահատվածում տվյալների պահմանումը, օգտագործումը, փոխանցումը, պահպանման անվտանգության ապահովը և տվյալների հետ կատարվող ցանկացած գործողություն պետությունը իրականացում է էլեկտրոնային կառավարման համակարգերի միջոցով՝ օրենքով սահմանված կարգով: Օրինակ՝ տվյալների առցանց ստուգման միջոցով անձի նույնականացում, առցանց ծառայության մատուցում և մի շարք այլ գործառույթներ:

Այս հարթակը հանդիսանում է ՀՀ քաղաքացու անձնական էլեկտրոնային գրասենյակ, որը հնարավորություն է տալիս տեսնել ՀՀ պետական էլեկտրոնային շտեմարաններում իր մասին պահվող տվյալները՝

- անձնագրային,
- ընտանեկան կարգավիճակի,
- վարորդական վկայականի,
- անշարժ և շարժական գույքի,
- ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների,
- գրանցման հասցեների,
- կազմակերպությունների,
- աշխատանքի և եկամուտների, եկամտային հարկի,
- հաշվառված զենքերի,
- սոցիալական կարգավիճակի,
- կրթական փաստաթղթերի,
- կատարողական վարույթների,
- նոտարական գործարքների և մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ:

Պաշտոնական էլեկտրոնային փոստը քաղաքացու և հանրային իշխանության էլեկտրոնային հաղորդակցության պաշտոնական միջոց է: Այն նախատեսված է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պաշտոնական ծանուցումների համար:

ՀՀ յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ ունի պաշտոնական էլեկտրոնային փոստ:

Պաշտոնական էլեկտրոնային փոստն ակտիվացված է համարվում ֆիզիկական անձին նույնականացման քարտի տրամադրման պահից:

Իրավաբանական անձին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցե շնորհվում է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում իրավաբանական անձի գրանցման համարը (կոդը) գրանցելու պահից:

Մի շփոթեք ձեր անձնական կամ աշխատանքային էլեկտրոնային փոստը e-citizen պաշտոնական էլեկտրոնային փոստի հետ:

Ֆիզիկական անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն կազմված է ֆիզիկական անձի հանրային ծառայությունների համարանիշի, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարի և «@e-citizen.am» բառերի համակցությունից:

Օրինակ՝ 1123456789@e-citizen.am

Իրավաբանական անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն կազմված է տվյալ իրավաբանական անձի գրանցման համարի (կոդի), պետական մարմնի և տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի իրավաբանական անձի գրանցման համարի (կոդի) և «@e-citizen.am» բառերի համակցությունից:

Օրինակ՝ 12345678@e-citizen.am

www.e-citizen.am հարթակի միջոցով կարող եք՝

- Առցանց տեսնել ձեր փաստաթղթերի, անձնական տեղեկատվության էլեկտրոնային շտեմարանը
- Կառավարել Ձեր պաշտոնական էլեկտրոնային փոստը
- Ստանալ պաշտոնական էլեկտրոնային ծանուցումներ
- Տեսնել Ձեր մասին իրականցված հարցումների վերաբերյալ տվյալները
- Ներբեռնել բջջային հավելվածը և օգտվել նույն հնարավորություններից բջջային հեռախոսի միջոցով

Ի՞նչ է իրենից ներկայացնում էլեկտրոնային նույնականացումը:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմին կամ կազմակերպություն անձամբ այցելելիս Դուք անցնում եք նույնականացում՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր կամ նույնականացման քարտ:

Էլեկտրոնային տիրույթում պետական կամ համայնքային ծառայություն ստանալու նպատակով Դուք նույնպես պետք է անցնեք նույնականացում՝ ներկայացնելով որոշակի տեղեկություններ կամ օգտվեք էլեկտրոնային կամ բջջային սարքավորումներից:

Ձեր կողմից լրացված տվյալները համապատասխան կառույցները պետական տվյալների բազաներից ճշտումների միջոցով հաստատում և վերիֆիկացնում են:

Սարքավորումների և բջջային հեռախոսի միջոցով նույնականացման պարագայում Դուք իդենտիֆիկացվում եք նույնականացման կամ բջջային քարտում զետեղված անհատական նույնականացման հավաստագրի միջոցով

Յուրաքանչյուրն ով ունի նույնականցման քարտ կարող է ակտիվացնել իր էլետրոնային թվային ստորագրությունը:

ՊԱՅՄԱՆ. Էլեկտրոնային թվային ստորագրություն կարող եք ակտիվացնել եթե հիշում եք Ձեր նույնականացման քարտի PIN և PUK ծածկագրերը:

Էլեկտրոնային թվային ստորագրություն ձեռք բերելու համար անհրաժեշտ է՝

- Նույնականացման քարտ (PIN և PUK ծածկագրերով)
- Նույնականացման քարտ ընթերցող սարք
- www.ekeng.am կայքից տեղադրել անհրաժեշտ ծրագրերը
- Ակտիվացնել նույնականացման քարտի PIN և PUK կոդերը
- Գրանցվել ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի Անձնական էջում
- Կատարել տարեկան սպասարկման վճարը

Բջջային թվային ստորագրություն ձեռք բերելու համար անհրաժեշտ է՝

- Դիմել Բջջային էլեկտրոնային թվային ստորագրություն տրամադրող <u>օպերատորներին</u>:

- Բջջային օպերատորը Ձեզ կտրամադրի նոր բջջային քարտ, որում զետեղված են բջջային նույնականացման և բջջային ստորագրություն հավաստագրերը:

ՀՀ պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգ https://verify.e-gov.am/

Վերջին տարիներին պետական մարմիններ պաշտոնական փաստաթղթեր տրամադրելիս փաստաթղթի վրա նշում են նաև վավերականության ստուգման համար հսկիչ կոդ կամ QR կոդ: Դա թույլ է տալիս առցանց եղանակով ստուգել փաստաթղթի իսկությունը և տեղեկանալ վավերականության մասին:

ՀՀ պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգը հանդիսանում է ՀՀ պետական մարմինների կողմից տրամադրվող պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միջոց:

Համակարգի միջոցով ներկայումս հնարավոր է ստուգել

- քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման վկայականների (օրինակ՝ ամուսնություն, ամուսնալուծություն և այլն),
- ապոստիլով վավերացված փաստաթղթերի,
- ՀՀ բժշկական հաստատությունների կողմից տրվող ծննդի և մահվան բժշկական վկայականների,
- դատվածության և հետախուզման առկայության վերաբերյալ տեղեկանքների վավերականությունը:

Նշված պաշտոնական փաստաթղթերի վավերականությունը հնարավոր է ստուգել պաշտոնական փաստաթղթի վրա առկա **QR կոդը** հեռախոսի միջոցով սքանավորելու կամ **16 նիշանոց համարը** համակարգում մուտքագրման միջոցով:

www.verify.e-gov.am հարթակի միջոցով կարող եք՝

- Իրականացնել պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգում
- Առցանց ծանոթանալ պաշտոնական փաստաթղթերի բովանդակությանը
- Ներբեռնել փաստաթուղթը

Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակ www.e-cadastre.am

ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների կայքը կոմիտեի կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման պաշտոնական հարթակն է, որը հնարավորություն է տալիս առցանց՝ անշարժ գույքի հարկի հաշվիչի օգնությամբ որոնել շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը և անշարժ գույքի հարկը՝ ըստ վկայականի համարի կամ կադաստրային ծածկագրի:

Կայքում գրանցվելուց հետո հնարավոր է կատարել դիմումների մուտքագրում, հետևել դիմումի ընթացքին, ստանալ միասնական տեղեկանք, կատարել կադաստրային քարտեզի հարցում, ինչպես նաև անշարժ գույքի հետ կապված գործիքների առցանց պատվիրում:

Կայքի միջոցով կարող եք՝

- Իրականացնել տեղեկությունների առցանց հարցում
- Ներկայացնել առցանց ծառայությունների ստացման դիմումներ
  Հետևել դիմումի ընթացքին
- Իրականացնել առցանց վճարումներ
- Նեռբեռնել բջջային հավելվածը և ծառայություններից օգտվել բջջային հեռախոսի օգնությամբ

Գույքահարկի միասնական համակարգ (Տեղական հարկերի հաշվառման միասնական համակարգ) https://pay.e-community.am/am/

Տեղական հարկերի հաշվառման միասնական համակարգի միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են տեղեկանալ վճարման ենթակա տեղական հարկերի (գույքահարկի) վերաբերյալ, էլեկտրոնային եղանակով վճարել իրենց պատկանող տրանսպորտային միջոցի և անշարժ գույքի հարկերը, ինչպես նաև ստանալ էլեկտրոնային վճարման անդորրագիրը ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին:

Կայքի միջոցով կարող եք՝

- Իրականացնել գույքահարկի վերաբերյալ տեղեկատվության առցանց հարցում
- Իրականացնել տրանսպորտային միջոցի գույքահարկի առցանց վճարում
- Իրականացնել անշարժ գույքի գույքահարկի առցանց վճարում

Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության միասնական շտեմարան
www.inspect.am

Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության միասնական շտեմարանը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության կողմից վարվող շտեմարան է, որի միջոցով հնարավոր է գտնել մոտակա տեխնիկական զննության կայանը, որոնման համակարգի միջոցով առցանց տեղեկատվություն ստանալ տրանսպորտային միջոցի տեխնիկական զննության ժամկետի վերաբերյալ, ինչպես նաև բաժանորդագրվել տեխնիկական զննության վերաբերյալ ծանուցում ստանալու համար:

Կայքի միջոցով կարող եք՝

- Առցանց ստուգել տեխզննության կարգավիճակը և ժամկետը
- Բաժանորդագրվել տեխզննության անհրաժեշտության վերաբերյալ առցանց ծանուցման համակարգին

Աշխատողների իրավունքների պաշտպանության առցանց հարթակ
www.employeeprotect.am

Աշխատողների իրավունքների պաշտպանության առցանց հարթակը վարվում է Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից: Հարթակը նախատեսված է աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում աշխատողների իրավունքների վերաբերյալ իրազեկման, խախտումների արձանագրման և ոլորտի կարգավորմանը միտված գործառույթների իրականացման համար: Հարթակը հնարավորություն է տալիս ներկայացնել առցանց հայտ/բողոք աշխատանքային իրավունքին առնչվող խնդիրները և խախտումների վերաբերյալ: Դիմումները, բողոքները, առաջարկները և ահազանգերը հնարավոր է ներկայացնել անանուն եղանակով՝ պահպանելով անձի գաղտնիությունը:

Կայքի միջոցով կարող եք՝

- Ստանալ աշխատողների իրավունքների վերաբերյալ առցանց տեղեկատվություն
- Ներկայացնել աշխատողների իրավունքների խախտումների վերաբերյալ առցանց բողոք
- Հետևել բողոքի ընթացքին

Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունների մատուցման առցանց հարթակ https://migration.e-gov.am/am

Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունների մատուցման այս հարթակը նախատեսված է առցանց ծառայություններ մատուցել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներին:

Կայքի միջոցով ՀՀ և օտարերկյա քաղաքացիները կարող են հերթագրվել մի շարք ծառայությունների ստացման համար, ինչպիսիք են քաղաքացիության հարցերով խորհրդատվության, անձնագրավորման, քաղաքացիության կարգավիճակի ստացման և այլն: Միաժամանակ, կայքի միջոցով հնարավոր է դիմել առցանց եղանակով տեղեկանքների ստացման համար:

Կայքի միջոցով կարող եք՝

- Առցանց հերթագրվել՝ ծառայություններից օգտվելու նպատակով
- Խիստ նույնականացմամբ ստանալ առցանց տեղեկանքներ՝ QR կոդի վավերացումով
- Կատարել պետական տուրքի առցանց վճարումներ

ԾԱՆՈԹԱՑԵՔ ՀՀ -ՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲՈԼՈՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ ՀՀ ԷԼ.-ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆԻ ՄԻՋՈՑՈՎ

https://www.digital-armenia.am/hy/e-catalog

Էլեկտրոնային առողջապահության համակարգ
https://www.armed.am/am/auth/loginnew

Անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգ
https://e-disability.am/home

Աշխատանքի թույլտվության համակարգ
https://workpermit.am/am/home

Կարիքների գնահատման համակարգ
https://www.soc-kariq.am

Հայկական կրթական միջավայր պաշարների շտեմարան
https://lib.armedu.am

Դպրոց ընդունվելու հայտագրման համակարգ
https://hayt.emis.am/home

Նշումների համար

ԹՎԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆ

info@digital-armenia.am

www.digital-armenia.am

+374 15 333 444
+374 93 344 433